

«ԿՈՒՆԻՆԿ» ԵՐԴԻՆ ՀՆԱԴՈՒՅՆ ԲՆԱԴԻՐԸ

Դ. ԲԱՄՊՈՒՔՅԱՆ (Ստամբուլ)

Մի քանի ամիս առաջ Մաշտոցի անվան Մատենադարանեն ստացանք բանասիրական գիտություններու դոկտոր Շուշանիկ Նազարյանի «Կոունկ» երգը և նրա պատմությունը» անունը կրող շահեկան հատորը¹:

Մեր ներկա գրությամբ պիտի անդրադառնանք այդ երկասիրությանը մատնանշելով կարգ մը կետեր և ներկայացնելով «Կոունկի» հնագույն բնագիրը, որն անծանոթ մնացած է հարգելի հեղինակին: Նախ հայտնենք թե՛ «Կոունկ» երգը առաջին անգամ ե՞րբ լույս տեսած է՝ խորագրով հոգված մը արդեն հրատարակած ենք 1 փետրվարի 1970 թվակիր «Մարմարա» օրաթերթին մեջ, զոր Նազարյան չէ տեսած: Զայն գրի առած էինք հիշյալ թերթին 2 դեկտեմբերի 1969 թվակիր համարին մեջ լույս տեսած Հայկ Դավթյանի՝ մեկ գրության առթիվ, որուն մեջ կըսեր թե՛ «Կոունկ» երգը առաջին անգամ տպագրված է 1740-ին Պոլսո մեջ, հավանաբար հետևելով բանասեր Արամ Արեմյանի (1898—1972), որ 1940 տարվո «Հայրենիք» ամսագրին մեջ հրատարակած «Առաջին տպագիր կոունկը» հոգվածին մեջ նույնպես անոր առաջին անգամ 1740-ին տպված ըլլալը կհավաստեր:

Այդ թվականներուն Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքի գրադարանին մեջ հանդիպած էինք 1714-ին Պոլիս տպված տաղարանի մը, որուն 219—221-րդ էջերուն վրա կարելի էր գտնել «Կոունկ» երգը: Հիշյալ տաղարանը անծանոթ մնացած է «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակը» պատրաստողներուն: Առաջին անգամ զայն հիշած է մատենագետ Քնարիկ Կորկոտյանը:

Շ. Նազարյան, «Կոունկ» երգի XVIII գարու իրեն ծանոթ յոթ տպագրություններուն միջև չէ հիշած 1714-ի տպագրությունը, և ցարդ ծանոթ 1709-ի առաջին տպագրութենեն անցած է 1738-ի տպագրության: Իսկ պակասավոր եղող հինգերորդ տաղարանին մեջ «Կոունկ» երգին 219—221-րդ էջերուն վրա հրատարակված ըլլալը նշած է: Նկատի առնելով, որ 1714-ի տպագրության մեջ ալ «Կոունկը» նույն էջերուն վրա լույս տեսած է, պետք է ընդունիլ թե՛ հիշյալ պակասավոր տպագրությունը 1714-ի տաղարանին հետ նույնն է: Հակառակ որ սույն տաղարանը 18 մայիս 1968 թ. ի վեր, 1836 թվահամարով սեփականությունն է Մաշտոցի անվան Մատենադարանին, որուն կողմէ լույս ընծայված է ներկա աշխատությունը, այս տպագրությունը անծանոթ մնացած է Շ. Նազարյանի:

Ատենին մեր կողմէ ընդօրինակված «Կոունկ» երգի 1714-ի բնագիրը երբ որ բաղդատեցինք Շ. Նազարյանի համեմատական բնագրին հետ, զիսավոր տարրերություն ըլլալով նշմարեցինք թե՛ առաջնույն վերջին տունը՝ Նազարյանի բնագրին մեջ 11-րդ տունին տեղը կգրավե և փոխադարձաբար:

1 Շ. Լ. Նազարյան, «Կոունկ» երգը և նրա պատմությունը, Երևան, 1977:

2 «Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում», Երևան, 1964, էջ 112:

Նկատի առնելով, որ պարագան նույնն է 1709-ի տպագրության համար ալ, ինչպես որ նշած է Շ. Նաղարյան (էջ 105), պետք է ընդունիլ թե՛ 1709-ի բնագիրը հիմ ծառայած է 1714-ի բնագրին: Սույնպես է նաև թրքահայոց Պատրիարքարանի թիվ 22 ձեռագիր տաղարանին մեջ (էջ 259—261), որ XVIII դարու վերջին քառորդին է: Զայն մանրամասնորեն նկարագրած ննք, երբ գեո կգտնվեր Ս. հաշ գպրեվանքի գրադարանը³:

Շ. Նաղարյան 34-րդ էջի տողատակին մեջ կըսե թե՛ «Մեզ անծանոթ է նաև 1701 թ. տպագրությունը»: Մինչդեռ սույն տաղարանին 1639 թվահամարով օրինակ մը գոյություն ունի Մաշտոցի անվան Մատենադարանը⁴: Շահեկան պիտի ըլլար նաև ստուգել թե՛ 1698 թվակիր պոլսատիւ տաղարանին մեջ ալ լույս տեսած է՝ թե ոչ: Սույն հատորին միմիայն վենետիկի մեջ գտնվիլը մեզի ծանոթ է: Սակայն ան ալ հավանական է, որ 1975-ի հրդեհին զոհը դարձած ըլլա: «Մարմարայի» մեջ լույս տեսած մեր վերահիշյալ գրության մեջ, «Կռունկ» երգին առաջին անգամ այդ տպագրության մեջ լույս տեսած ըլլալը հավանական նկատած էինք:

Այժմ կանցնինք ձեռագիր «Կռունկ»-ներուն: Շ. Նաղարյանի ծանոթ հնագույն բնագիրը կգտնվի Բանասեր Հարություն Քյուրտյանի (1901—1976) հավաքածոյին՝ 1678—1681 թթ., Պոլսո մեջ, Հովհաննես Երեցի ձեռամբ ընդօրինակված թիվ 85 տաղարանին մեջ: Այնուհետև հիշված են նաև զանազան վայրեր գտնվող հինգ ձեռագրեր ևս (էջ 22—28), որոնք բնագրային առանձնահատկություններ կներկայացնեն: Այսպիսով են ևս Երեք ձեռագիր (էջ 30): Ասոնցմէ առաջինը Ղալաթիո Ազգային մատենադարանի թիվ 154 ձեռագիրն է, որուն 1741 թ. ընդօրինակություն ըլլալը արձանագրած է Նաղարյան: Մինչդեռ ցուցակը կազմող Բաբկեն կաթողիկոս Կյուլեսերյան (1868—1936) զայն անթվակիր ներկայացուցած է⁵, որովհետև 1741 թվակիր արձանագրությունը գրչին պատկանող հիշատակարան մը չէ, այլ շուրջ դար մը ետք կատարված ստացողի հիշատակագրություն մըն է, ինչպես որ Կյուլեսերյան ալ զայն այդ խորագրով ներկայացուցած է: Արդեն վերջնույս գրչությունը բնագրեն բոլորովին տարբեր ու անարվեստ է: Շարագրության տկարությունը և ուղղագրական սխալներն ալ ենթակային թերուս անձ մը ըլլալը կհայտնեն:

Արձանագրությունը ստորև կներկայացնենք:

«Այս է յիշատակ Քերականութիւնս որ անդրանիկ ըստայաքն ի վանքն Գալատիայո, նորա անունըն է կառուցեալ Աստուածա[իւն] ամենօ[ր]—
հն[է]ալ Կոստ: Թվին ՌՃՂ (1741)ին գրեցաւ այս գիրս նոյեմբերի ամսուն
Ժ (10) ին» (էջ 297):

Ազգային մատենադարանի ձեռագիրները ներկայիս Պատրիարքարանի գիվանատունը գտնվելուն պատճառով՝ կարելիությունը ունեցանք մանրազնին քննելու հիշյալ ձեռագիրը, որ զանազան գրիչներու արտագրություններ են կազմված հավաքածո մըն է: 436-րդ էջին վրա բարեբաղդությունը ունեցանք գտնելու գրչին կողմէ գրի առնված 2 հունիս 1664 թվակիր հիշատակա-

³ «Շողակաթ» (բացառիկ), 1969, էջ 27—29 և «Շողակաթ» (տարեգիրք), 1970, էջ 65:

⁴ «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ», Սրեան, 1963, էջ 54:

⁵ «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիո Ազգային մատենադարանի հայոց», Անթիփա, 1961, թ. 989—990:

րան մը, որ Կյուլեսերյանի աչքեն լրիւլած է: Ներկայացնենք զայն, համառոտագրութիւնները վերցնելով:

«Ողորմեա բարեբաւ Քրիստոս այս տետրիս կրողին (գրողին— Գ. Բ.) մեղաւոր աւագ սարկաւա՛՛՛՛՛՛՛ Մարգարին և իւր ծնաւդացն Փաւլալին և իւր հաւրն Մարտիրոսին կենդանեացն և ննրնջեցելոցն իւրոց ամէն. դարձեալ իւր մեղացն քողութիւն և իւր ցաւուն բժշկութիւն և իւր եղբարցն խաղաղութիւն և անդորրութիւն քանի որ կենդանի են. յետոյ Աստուած քողու զիւրեանց մեղքն ևս ստաւել զիւր հոգևոր հայր վարդապետին վարդապետին և իւր մարմնօ(աւ)որ ծնօղին ամէն: Մարդասէր Քրիստոս ողորմեա կարգացողացս և լսողացն և որք գողորմին ասէ. ամէն, հայր:

ԹՎԻՆ ՌՃԺԳ (1664) յունիս Բ.»:

Վերոգրյալ հիշատակարանին մեջ «վարդապետին» բառը կրկնված է: Առաջինը համառոտադրյալ ձևով է, իսկ երկրորդը՝ ամբողջական: Կկարծենք թե՛ առաջինը պետք էր որ Լնթակային անունը ըլլար, սակայն գրիչը հավանաբար անուշադրութեամբ անվան տեղ «վարդապետին» բառը արձանագրած է:

Նկատի առնելով, որ ձեռագրին բոլոր մասերուն գրչութիւնը XVII դարու կեսերն է, և «Կոռուկ» երգին գտնված մասը թերեւս XVII դարու առաջին կեսեր, կարելի է ընդունել թե՛ «Կոռուկի» ներկա բնագիրն ալ ամենեն ուշ XVII դարու կեսերն է: Հետեւաբար զայն կրնանք նկատել հնագույնը:

Գրչութիւնը նոտր է: Բնագրին մեջ մի քանի սխալներ կարելի է նշմարել: Հիշենք կարեւորները: Նախ, երկրորդ տունին, երկրորդ տողին առաջին բառը փոխանակ «քանիս»-ի պետք է որ ըլլա «քանի»: Հետո չորրորդ տունին առաջին տողին «կապեցաւ»-ը, պետք է որ ըլլա «կամեցաւ»: Իսկ նույն տունին երկրորդ տողին «տաւեւն» պետք է որ ըլլա «տաւտեւն»:

Սույն բնագիրը կարեւորութիւն ունի երեք տեսակետով: Նախ իններորդ քառյակին՝ Նաղարյանի 1678—1681 թվակիր առաջին՝ և 1695 թվակիր չորրորդ ձեռագիրներուն մեջ միայն գոյութիւն ունենալն է: Երկրորդ կարեւոր պարագան «Աշունն է մօտեցեր» բառերով սկսող վերջին քառյակին հոս ալ գոյութիւն չունենալն է: Ինչպես որ հիշյալ երկու ձեռագիրներն ալ, այս վերջին քառյակը չեն պարունակեր: Այս երկու պարագաներն ալ բնագրին XVII դարուն պատկանիլը և վերջին տունին հետեւամուտ ըլլալը կփաստեն:

Սույն բնագրին՝ Ծ. Նաղարյանի վերականգնած բաղդատական բնագրին հետ ունեցած երրորդ մեկ տարբերութիւնն ալ յոթերորդ և ութերորդ տուններուն տեղափոխութիւն կրած ըլլալն է: Այս տարբերութիւնը միակն է որուն կարելի չէ հանդիպիլ մյուս բնագիրներուն մեջ:

Կփափաքինք նաև համառոտ կերպով արտահայտվիլ Ղևոնդ Ալիշանի (1820—1901) կողմէ կատարված «Կոռուկի» անգլերեն թարգմանութեան մասին: Նախ նշենք թե՛ իր թարգմանութիւնը հարազատ թարգմանութիւն մը չէ, այլ հայերեն բնագրին մոտավոր իմաստը տրված է: Կան նաև մի քանի անճիշտ կերպով թարգմանված բառեր: Ասոնցմէ միմիայն ամենախորթինը եղող և երրորդ քառյակին մեջ հիշված «տալապ» բառին մասին կուզենք բացատրութիւն տալ: Ալիշան զայն խաբութիւն կամ հուսախաբութիւն (disappointment) իմաստով թարգմանած է: Այս բառը քիչ հավանականութեամբ կրնա ըլլալ «տօլապ» բառը, որ կնշանակե նաև խաբու-

թյուն կամ որոգայթ: Մինչև օրս ալ թուրքերենի մեջ «տօլապ չէվիրմէն», այսինքն «որոգայթ լարել» ասութիւնը կգործածվի: Հետևաբար այս իմաստով կնշանակե «Քեզի բան մը հարցնողը չես իտաբեր»: Երկրորդ, կարելի է ընդունիլ նաև «քալէպ» բառը, որ կնշանակե պահանջել: Այս իմաստով ալ ըսել կուզե թե՝ «Քեզի բան մը հարցնողեն բան մը չես պահանջեր»: Արդարև, «քալէպ» բառը հինեն «քալապ» ձևով ալ գրված է⁶: Այս վերջինը ավելի հավանական է, քանի որ «տօլապ»-ի տեղ «տալապ» գրված է:

Այս առթիվ կուզենք նաև նշել թե՝ «Կոունկ» անունը կրող թերթերու միջև մոռցված է հիշատակութիւնը Սարգիս Քեչյանի և Արամ Փեհլիվանյանի կողմէ 15 ապրիլ և 15 մայիս 1950 թ. երկու թիվ միայն Ազրն տպարանէն լույս ընծայված «Կոունկ» գրական և գեղարվեստական ամսաթերթին (շար. 31×45 սմ):

Վերջավորութեան կներկայացնենք հնագույն «Կոունկի» բնագիրը, որ կգտնվի ձեռագրին 213—215-րդ էջերուն վրա: Խորագրին երկու տողերը դժբախտաբար ամբողջութեամբ ջնջված ըլլալով անընթեռնելի են:

Զի մոռնանք նաև մատնանշելու թե՝ վերջին տունին առաջին բառին «այսօր»-ի տեղ «այսաւր» ձևով գրվիլն ալ բնագրին XVII դարու առաջին կեսէն ըլլալուն իբր փաստ կրնա ծառայել:

* * *

Կոունկ ուստից կու գաս ծառա եմ ծայնիդ.
Կոունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:
Մի վազեր երամիդ դու շուտ կու հասնիս.
Կոունկ մեր աշխարհէն՝ խապրիկ մի չունիս:

Թողեր եմ օկեր եմ մլքերս ու զայգիս.
Քանիս որ ախ կանեմ կու փուլի հոգիս.
Կոունկ պան մի կացիր ծայնիկդ ի հոգիս.
Կոունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:

Քեզ խապար հարցնողին չես աներ տալապ.
Զայնիկդ անուշ կու զայ քան զչրի տօլապ.
Կոունկ Պաղատտ իշնուա կամ րէ ի Հալապ.
Կոունկ մեր աշխարհէն:

Մբրտերս կապեցաւ ելանք գնացանք.
Սուտ աստուարիս տա[ւ]տերն իմացաք.
Աղուհացկեր մարդկաց կարօտ մնացաք.
Կոունկ մեր աշխար:

Աստուարիս բաներն կամաց կամաց է.
Միքէ աստուած լսէ դուռնին ի բաց է.
Ղարիւպին սիրտն իս սուգ աչերն ի լաց է.
Կու:

Աստուած քեզէ կու խնդրեմ մօրվէք ու քերամ.
Ղարիւպին սիրտն է խոց նիկարն է վէրամ.
Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ.
Կոուն:

⁶ Հ. Հակոբբոս վրդ. Պողոսեան, Համառոտ բառարան ի տառակապանէ ի հայ, Վիեննա, 1841, էջ 205:

Հաւասով պսոկեր եմ ներքեւ է խուշկի.
Հոտուն այլ չեմ գարշիր կու քվի մշկի.
Շատ հասրար մնացաւ անկողնի տօշկի.
Կոռունկ մեր աշխար:

Ոչ զուրն գիտեմ ոչ զկիրակին.
Ձարկած է շամփուրն բոնած կրակին.
Այրիւս չեմ հոգար քեզնէ կարօտ եմ.
Կոռ:

Սրտէս շերքար հոգեկ զարկաց նետերն.
Երբամ անկնիմ ես էլած գետերն.
Խեղրիլս չեմ հոգար քեզնէ կարօտ եմ.
Կոռունկ մեր աշխար:

Պաղտատու կու զաս դու կերբաս ի սէնքաք.
Թղրիկ մի գրեւ եմ տամ քեզ ամանաք.
Աստուած բող վկայ լինի քո վե[ր]աւ.
Կոռունկ մեր:

Գրեւ եմ մէջ քղրիս քէ հոս մնացի.
Օրիկ մի օրերուն զաշերս չի քացի.
Սիրելիք ի ձեզանէ կարօտ մնացի.
Կրօունկ մեր աշ:

Այսաւր դարիպորին մինակ միաւոր.
Հոգով և մարմնով ես եմ մեղաւոր.
Սուրք Սարգիս օգնական կապուտ ձիաւոր.
Կոռունկ մեր աշխարհէն խապար մի չունիս:

СТАРЕЙШИЙ РУКОПИСНЫЙ ТЕКСТ ПЕСНИ «КРУНК»

Г. БАМПУКЧЯН (Стамбул)

(Резюме)

Настоящая заметка посвящена старейшему тексту песни «Крунк», остававшемуся до сих пор неизвестным. Сравнительный анализ рукописей и памятных записей показывает, что новонайденный отрывок песни относится к середине XVII века.